

եւ գոյին, եւ յետոյ թագաւոր եւս եղեւ, եւ միակ Հայ թագաւոր, եւ զի արօռ կաթողիկոսին գրեաթէ առ կռան կայր սահմանաց տէրութեան իւրոյ (ի Հռոմկլայ), եւ միանգամայն ասել, զի հօր էր, եւ ամենեքին ակն ածէին ՚ի նմանէ, աւագօրէն գործեաց եւ յայսմ տեսչութեան:

Տեսաք ՚ի պատմութեան եկաւորութեան Փրետրիկի՝ զգլուխ Հայաստանեայց եկեղեցոյ՝ հրաւիրեալ ՚ի Լեւոնէ, եւ ընդ իւր հանդերձեալ ընդ առաջ ելանել կայսեր. զնոյն՝ եւ առ որդի նորին առաքեալ՝ ՚ի հիւանդութեանն. եւ զոյգ նմին թուղթս ընկալեալ ՚ի Քահանայապետէն Հռովմայ: Յամենայնի մտերիմ Լեւոնի երեւի կաթողիկոս այս Գրիգոր Տղայ, որ յաւուրս Սլեհի բռնակալութեանն յաջորդեալ էր զՍ. Ներսէս Շնորհալի, եւ ՚ի մահուն (16 կամ 25 մայիսի, 1193), ինքնին Լեւոն ընդ Ս. Ներսիսի Լամբրունեցոյ հանգոյց զնա ՚ի դամբանս Դրագարկու, զի անդ հանդիպեցաւ նմա օրհասն⁴⁹: Երեւի հեղինակութիւն Լեւոնի եւ յընտրութեան յաջորդի նորին եւ քեռորդոյ՝ մանկահասակն Վահրամայ՝ Գրիգորիս կոչեցելոյ. քանզի ասէ Լամբրունեցին առ նա. «Ձեր աստուածպաշտութիւնդ՝ կոչեաց զմեզ ՚ի մանուկ կաթողիկոսին ձեռնադրիլն». այլ առաւել հեղինակօրէն վարեցաւ ՚ի գահընկեցութեան կամ յարգելման նորին: Քանզի, ըստ պատմչիս մերոյ, սա «Յորժամ եղեւ կաթողիկոս՝ ոչ տանէր զառաջին հնազանդութիւնն ամենեցուն, որպէս յորժամ ընդ դաստիարակաւ էր. այլ ինքնիշխանութեամբ տանէր զհայրապետութիւնն, որպէս տեսեալն էր ՚ի քեռին իւր: Յայնժամ մախացեալ ընդ նա աւագագոյն մարդիկն, առաքեն առ Լեւոն եւ ասեն. Ոչ ունի սա իմաստութիւն՝ վարել զհայրապետութիւնն՝ որպէս արժան է: Եւ յօդեցին որպէս կամեցան զնմանէ, եւ զայս արարին միանգամ եւ երկիցս եւ երիցս. մինչեւ շարժեցին զԼեւոն ՚ի կամս իւրեանց: Եւ առաքէ ՚ի բերդն Հռոմկլայն՝ զարքեպիսկոպոսն զՏէր Յովհաննէս՝ առնել ըստ իմաստութեան իւրում. եւ նա գնացեալ անդ, եւ մտեալ առ կաթողիկոսն պատուով, եւ մեծարեալ որպէս զհիւր եւ զազգային: Իսկ նա ձեռնտուութեամբ սպասաւորաց նորա, մինչդեռ էին նստեալ ՚ի սեղանն ՚ի ժամ ճաշոյն, ետ փակել զդրունս բերդին. եւ տարածեցաւ աղմուկն. եւ հայրապետն զարհուրեցաւ. եւ ասէ զՏէր Յովհաննէս. Զի՞նչ է այս գոր լսեմս: Եւ նա ասէ. Բռնած ես: Եւ կալեալ զնա եղին յարգելանի, եւ

⁴⁹ «Անդ հանգուցաք զնա ՚ի տապանի (գրէ Լամբրունեցին), սպասաւորութեամբ իմ Ներսիսի եւ բարեպաշտ իշխողի մերոյ Լեւոնի»: